ԽՈՐՀՐԴԻ 1998 թվականի ապրիլի 7-ի 98/24/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Աշխատավայրում քիմիական նյութերի հետ շփման հետևանքով առաջացող ռիսկերից աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության մասին (տասնչորսերորդ առանձին հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 118ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը, որը կազմվել է Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի (1) հետ խորհրդակցելուց հետո,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 189գ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն ([3]),

1) քանի որ Պայմանագրի 118ա հոդվածով նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների միջոցով պետք է ընդունի հատկապես աշխատանքային միջավայրի բարելավումների խթանմանն ուղղված նվազագույն պահանջներ՝ աշխատողների անվտանգության և առողջության պաշտպանության ավելի բարձր մակարդակ ապահովելու նպատակով,

2) քանի որ, համաձայն այդ հոդվածի, պետք է ձեռնպահ մնալ նման հրահանգներով այնպիսի վարչական, ֆինանսական և իրավական սահմանափակումներ սահմանելուց, որոնք կխոչընդոտեին փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը,

3) քանի որ աշխատավայրում աշխատողների անվտանգության, հիգիենայի և առողջապահական նորմերի ապահովման բարելավումը մի նպատակ է, որը չպետք է ավելի ցածր դասվի զուտ տնտեսական նկատառումներից,

4) քանի որ քիմիական նյութերի հետ շփման հետևանքով առաջացող ռիսկերից աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության նվազագույն պահանջների բավարարումը նպատակ ունի ոչ միայն յուրաքանչյուր առանձին աշխատողի առողջության ու անվտանգության պաշտպանությունն ապահովելու, այլև Համայնքի բոլոր աշխատողների համար ապահովելու առողջության և անվտանգության պաշտպանության

նվազագույն այնպիսի մակարդակ, որի հետևանքով մրցակցության որևէ հնարավոր խաթարում տեղի չի ունենում,

5) քանի որ քիմիական նյութերի հետ կապված ռիսկերից պաշտպանության համապատասխան մակարդակ պետք է սահմանվի ամբողջ Համայնքի համար, և քանի որ այն պետք է բաղկացած լինի ոչ թե մանրամասն կարգադրողական պահանջներից, այլ ընդհանուր սկզբունքների համակարգից, որն անդամ պետություններին հնարավորություն կտա համաձայնեցված կերպով կիրառել նվազագույն պահանջները,

6) քանի որ քիմիական նյութերի հետ շփում ենթադրող աշխատանքային գործունեության դեպքում առկա է աշխատողներին վտանգելու հավանականություն,

7) քանի որ «Աշխատավայրում քիմիական, ֆիզիկական, կենսաբանական նյութերի հետ շփման հետևանքով առաջացող ռիսկերից աշխատողներին պաշտպանելու մասին» Խորհրդի 1980 թվականի նոյեմբերի 27-ի 80/1107/ԵՏՀ հրահանգը (4), «Աշխատավայրում մետաղական կապարի և դրա իոնային միացությունների հետ շփման հետևանքով առաջացող վտանգներից աշխատողներին պաշտպանելու մասին» Խորհրդի 1982 թվականի հուլիսի 28-ի 82/605/ԵՏՀ հրահանգը (80/1107/ԵՏՀ հրահանգի 8-րդ հոդվածի իմաստով առաջին առանձին հրահանգ) (5) և «Որոշ հատուկ նյութեր և (կամ) աշխատանքային գործունեության որոշ տեսակներ արգելելու միջոցով աշխատողներին պաշտպանելու մասին» Խորհրդի 1988 թվականի հունիսի 9-ի 88/364/ԵՏՀ հրահանգը (80/1107/ԵՏՀ հրահանգի 8-րդ հոդվածի իմաստով չորրորդ առանձին հրահանգ) (6), նույնականության և հստակության ապահովման, ինչպես նաև տեխնիկական նկատառումներից ելնելով, պետք է վերանայվեն և ընդգրկվեն մեկ հրահանգում, որով կսահմանվեն աշխատավայրում քիմիական նյութերի հետ շփում ենթադրող աշխատանքային գործունեությունների դեպքում աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության նվազագույն պահանջները,

8) քանի որ սույն Հրահանգը «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցառումների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի (7) 16(1) հոդվածի իմաստով առանձին հրահանգ է,

9) քանի որ այդ պատճառով նշված Հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառվում են կենսաբանական նյութերի հետ շփվող աշխատողների նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

10) քանի որ ավտոճանապարհով, երկաթուղով, ջրային և օդային ճանապարհներով վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ Համայնքի դրույթներում ներառված պարտադիր կատարման ենթակա միջազգային պայմանագրերը և կոնվենցիաները պարունակում են վտանգավոր քիմիական նյութերի փոխադրման վերաբերյալ առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներ,

11) քանի որ վտանգավոր նյութերի և պատրաստուկների դասակարգմանը, փաթեթավորմանը և, համապատասխանաբար, պիտակավորմանը վերաբերող օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համապատասխանեցման մասին 67/548/ԵՏՀ (8) և 88/379/ԵՏՀ (9) հրահանգներում Խորհրդի կողմից սահմանված է վտանգավոր նյութերի և պատրաստուկների դասակարգման չափորոշիչների համակարգ,

12) քանի որ վտանգավոր քիմիական նյութի սահմանման մեջ պետք է ներառված լինի այդ չափորոշիչներին համապատասխանող ցանկացած քիմիական նյութ, ինչպես նաև ցանկացած նյութ, որը, չհամապատասխանելով այդ չափորոշիչներին, ֆիզիկաքիմիական, քիմիական կամ թունաբանական հատկությունների կամ աշխատավայրում դրա առկայության կամ օգտագործման եղանակի պատճառով այդուհանդերձ, կարող է վտանգ ներկայացնել աշխատողների անվտանգության և առողջության համար,

13) քանի որ 90/492/ԵՏՀ հրահանգի (10) մեջ Հանձնաժողովի կողմից սահմանված է վտանգավոր նյութերի և պատրաստուկների վերաբերյալ հատուկ տեղեկատվության համակարգ՝ հիմնականում արդյունաբերող օգտագործողների համար նախատեսված անվտանգության անձնագրերի ձևով, որոնք նրանց հնարավորություն են ընձեռում աշխատողների անվտանգության և առողջության պաշտպանության համար միջոցներ ձեռնարկել, և քանի որ «Աշխատավայրում առողջության վրա ազդեցության և (կամ) անվտանգության վերաբերյալ ցուցանակների մասով նվազագույն պահանջների մասին» Խորհրդի 1992 թվականի հունիսի 24-ի 92/58/ԵՏՀ հրահանգով (89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով իններորդ առանձին հրահանգ) (11), սահմանված է աշխատավայրում վտանգավոր նյութերի կամ պատրաստուկների համար օգտագործվող տարաների և գլանների մակնշման համակարգ,

14) քանի որ գործատուն պետք է գնահատի աշխատավայրում վտանգավոր քիմիական նյութերի առկայության հետևանքով աշխատողների անվտանգությանը և առողջությանը սպառնացող ցանկացած ռիսկ՝ սույն Հրահանգով սահմանված անհրաժեշտ կանխարգելիչ և պաշտպանիչ միջոցներ ձեռնարկելու նպատակով,

15) քանի որ ռիսկի գնահատման արդյունքում որոշված և գործատուի կողմից ձեռնարկված կանխարգելիչ միջոցները պետք է համապատասխանեն հանրության առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության կարիքներին,

16) քանի որ պաշտպանության բարելավված մակարդակի ապահովման նպատակով աշխատողներին հասանելի տեղեկատվության մեջ լրացումներ կատարելու համար անհրաժեշտ է, որպեսզի աշխատողները և նրանց ներկայացուցիչները տեղեկացված լինեն իրենց անվտանգությանը և առողջությանը քիմիական նյութերի հետ շփման հետևանքով սպառնացող վտանգների ու այդ վտանգների նվազեցման կամ վերացման համար անհրաժեշտ միջոցների մասին, ինչպես նա ապահովելու համար, որպեսզի աշխատողները գտնվեն անհրաժեշտ կանխարգելիչ միջոցների ձեռնարկման փաստը ստուգելու կարգավիճակում,

17) քանի որ այն աշխատողների առողջական վիճակի հսկողության գործընթացը, որոնց առողջությունը վերոնշյալ գնահատման արդյունքում պարզվել է, որ ենթակա է վտանգվելու, կարող է նպաստել գործատուի կողմից կանխարգելիչ և պաշտպանիչ միջոցների ձեռնարկմանը,

18) քանի որ աշխատողների անվտանգության և առողջության պաշտպանության բարելավման նպատակով գործատուն պետք է պարբերաբար իրականացնի գնահատում և չափումներ, ինչպես նաև տեղյակ լինի տեխնոլոգիական նոր զարգացումներին,

19) քանի որ աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի արժեքների՝ Հանձնաժողովի կողմից սահմանմանն աջակցելու նպատակով վերջին գիտական տվյալները պետք է գնահատվեն անկախ գիտնականների կողմից,

20) քանի որ թեև որոշ դեպքերում գիտական իմացությունը չի կարող այնպիսին լինել, որը թույլ կտա, որ քիմիական նյութի հետ շփման մակարդակը սահմանվի մի մակարդակով, որից ցածր այն առողջության համար ռիսկ չի ենթադրում, այնուամենայնիվ, քիմիական նյութի հետ շփման նվազեցումը նաև այդ վտանգները կնվազեցնի,

21) քանի որ 80/1107/ԵՏՀ հրահանգով նախատեսվածի համաձայն Հանձնաժողովը 91/322/ԵՏՀ (12) և 96/94/ԵՀ (13) հրահանգներում սահմանել է սահմանային թույլատրելի ինդիկատիվ արժեքներ, և քանի որ նախորդ հրահանգները պետք է պահպանվեն որպես ներկայիս համակարգի մի մաս,

22) քանի որ 89/391/ԵՏՀ հրահանգի համաձայն կազմավորված Կոմիտեի հետ համագործակցության արդյունքում Հանձնաժողովի կողմից սույն Հրահանգում պետք է կատարվեն տեխնիկական բնույթի ճշգրտումներ, որոնք Հանձնաժողովին կօգնեն այդ հրահանգի շրջանակներում ընդունված առանձին հրահանգներում տեխնիկական բնույթի փոփոխություններ կատարել, և քանի որ 74/325/ԵՏՀ որոշման (14) համաձայն, Հանձնաժողովը Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեից առաջին հերթին խորհրդատվություն ստանալու փորձ կատարելուց հետո պետք է նաև կազմի սույն Հրահանգի կիրառության վերաբերյալ գործնական ուղեցույցներ,

23) քանի որ 80/1107/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելու հետևանքով քիմիական, ֆիզիկական ու կենսաբանական նյութերից աշխատողների պաշտպանության ներկայիս ստանդարտները չպետք է ավելի ցածր մակարդակի դասվեն, և քանի որ կենսաբանական նյութերի վերաբերյալ գործող հրահանգներից, ֆիզիկական նյութերի վերաբերյալ առաջարկված հրահանգից, սույն Հրահանգից և այս տեքստերում կատարված ցանկացած փոփոխությունից բխող ստանդարտներում պետք է արտացոլվեն և դրանցում առնվազն պետք է պահպանվեն նշված հրահանգով սահմանված ստանդարտները,

24) քանի որ սույն Հրահանգով ներքին շուկայի սոցիալական ուղղվածության ձևավորմանը միտված գործնական քայլ է կատարվում,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Նպատակը և գործողության ոլորտը

1. 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով տասնչորսերորդ առանձին հրահանգ հանդիսացող սույն Հրահանգով սահմանվում են աշխատավայրում առկա քիմիական նյութերի ազդեցությունից առաջացող կամ առաջանալու հավանականություն ունեցող ռիսկերից կամ քիմիական նյութերի հետ շփում ենթադրող աշխատանքային

գործունեությունից բխող ռիսկերից աշխատողների անվտանգության և առողջության պաշտպանության նվազագույն պահանջներ:

2. Սույն Հրահանգի պահանջները կիրառվում են, երբ աշխատավայրում առկա են կամ կարող են առկա լինել քիմիական նյութեր՝ չհակասելով այն քիմիական նյութերին վերաբերող դրույթներին, որոնց նկատմամբ, «Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի հիման վրա ընդունված հրահանգների համաձայն, ճառագայթումից պաշտպանությանն ուղղված միջոցներ են կիրառվում:

3. Սույն Հրահանգի դրույթները կիրառվում են աշխատավայրում առկա քաղցկեղածին նյութերի նկատմամբ՝ չհակասելով «Քաղցկեղածին նյութերի հետ շփման հետևանքով առաջացող վտանգներից աշխատողներին պաշտպանելու մասին» Խորհրդի 1990 թվականի հունիսի 28-ի 90/394/ԵՏՀ հրահանգի (89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով վեցերորդ առանձին հրահանգ) (15) առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

4. 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառվում են սույն հոդվածում նշված ամբողջ ոլորտի նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

5. Սույն Հրահանգի դրույթները վտանգավոր քիմիական նյութերի փոխադրման դեպքում կիրառվում են՝ չհակասելով 94/55/ԵՀ հրահանգի (16), 96/49/ԵՀ հրահանգի (17), 93/75/ԵՏՀ հրահանգի (18) 2-րդ հոդվածում սահմանվածի համաձայն՝ ՎԲՄԾԿ–ի, «Քիմիական նյութերի բալք փոխադրման մասին» միջազգային կանոնագրքի և «Հեղուկացված գազերի բալք փոխադրման համար նախատեսված նավերի շինարարության և սարքավորման մասին» միջազգային կանոնագրքի, Համայնքի իրավունքում ներառված «Ներքին ջրուղիներով վտանգավոր բեռների միջազգային փոխադրումների վերաբերյալ» եվրոպական համաձայնագրի և «Հռենոս գետով վտանգավոր նյութերի փոխադրման մասին» կանոնակարգի, ինչպես նաև Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության կողմից սույն Հրահանգն ուժի մեջ մտնելու օրը թողարկված վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ տեխնիկական ցուցումների առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակով օգտագործված եզրույթներն ունեն հետևյալ իմաստները՝

ա) «քիմիական նյութ» նշանակում է ցանկացած քիմիական տարր կամ միացություն՝ առանձին վիճակում կամ խառնուրդի մեջ, բնական վիճակում կամ որևէ աշխատանքային գործունեության արդյունքում արտադրված, դրա ընթացքում օգտագործված կամ դրա հետևանքով արտանետված, այդ թվում՝ որպես թափոններ արտանետումները, անկախ այն հանգամանքից՝ դա միտումնավոր կերպով է արտադրվել, թե ոչ և արդյոք չի շուկայահանվել.

բ) «վտանգավոր քիմիական նյութ» նշանակում է՝

i) ցանկացած քիմիական նյութ, որը 67/548/ԵՏՀ հրահանգի VI հավելվածի չափանիշների համաձայն, կարող է դասակարգվել որպես վտանգավոր նյութ՝ անկախ այն հանգամանքից, այդ նյութը դասակարգված է այդ Հրահանգով, թե ոչ, և որը տարբերվում է այն նյութերից, որոնք դասակարգված են միայն որպես շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր.

ii) ցանկացած քիմիական նյութ, որը համապատասխանում է 88/379/ԵՏՀ հրահանգի իմաստով որպես վտանգավոր պատրաստուկ դասակարգվելու չափանիշներին՝ անկախ այն հանգամանքից, այդ պատրաստուկը դասակարգված է այդ Հրահանգով, թե ոչ, և որը տարբերվում է այն պատրաստուկներից, որոնք դասակարգված են միայն որպես շրջակա միջավայրի համար վտանգավոր պատրաստուկներ.

iii) ցանկացած քիմիական նյութ, որը (i) և (ii) ենթապարբերությունների համաձայն թեև չի համապատասխանում որպես վտանգավոր դասակարգվելու չափանիշներին, սակայն կարող է իր ֆիզիկաքիմիական, քիմիական կամ թունաբանական հատկությունների կամ աշխատավայրում դրա առկայության կամ օգտագործման եղանակի պատճառով այդուհանդերձ, վտանգ ներկայացնել աշխատողների անվտանգության և առողջության համար, այդ թվում՝ ցանկացած քիմիական նյութ, որին, 3-րդ հոդվածի համաձայն, վերագրվել է աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի արժեք.

գ) «քիմիական նյութերի հետ շփում ենթադրող գործունեություն» նշանակում է աշխատանքային ցանկացած գործընթաց՝ ներառյալ արտադրությունը, բեռնավորումը–բեռնաթափումը, պահեստավորումը, փոխադրումը կամ տնօրինումը և մշակումը, որոնց

հետևանքով առաջանում, որոնց ժամանակ օգտագործվում են կամ մտադրություն կա, որ քիմիական նյութեր օգտագործվեն.

դ) «Աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի արժեք» եթե այլ բան նախատեսված չէ, նշանակում է օդում՝ աշխատողի շնչառական գոտում առկա քիմիական նյութի կոնցենտրացիա՝ որոշակի բազային ժամանակահատվածի կտրվածքով հաշվարկված միջին արժեք.

ե) «կենսաբանական սահմանային թույլատրելի արժեք» նշանակում է համապատասխան կենսաբանական միջավայրում առկա նյութի, դրա մետաբոլիտի կոնցենտրացիայի սահմանաչափ կամ ազդեցության ցուցիչ.

զ) «առողջական վիճակի հսկողություն» նշանակում է առանձին աշխատողի՝ աշխատավայրում որոշակի քիմիական նյութերի հետ շփման հետևանքով ձևավորված առողջական վիճակի որոշման նպատակով այդ անհատի առողջական վիճակի գնահատում.

է) «վտանգ» նշանակում է քիմիական նյութի՝ վնաս պատճառելու բնորոշ հատկանիշ.

ը) «ռիսկ» նշանակում է վնաս պատճառելու հավանականություն, որը կարող է առաջանալ օգտագործման պայմանների և (կամ) շփման հետևանքով:

Հոդված 3

Աշխատավայրում ազդեցության ենթարկվելու և կենսաբանական սահմանային թույլատրելի արժեքները

1. Հանձնաժողովը վերջին առկա գիտական տվյալների անկախ գիտական գնահատման գործընթացի միջոցով գնահատում է վտանգավոր քիմիական նյութերի՝ առողջության վրա ունեցած ազդեցությունների և աշխատավայրում դրանց հետ շփման մակարդակի փոխադարձ կապը:

2. Հանձնաժողովը, հիմնվելով 1-ին պարբերության մեջ նկարագրված գնահատման վրա և առաջնահերթորեն խորհրդակցելով Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ, աշխատողներին քիմիական բնույթի ռիսկերից պաշտպանելու համար առաջարկում է, որպեսզի Համայնքի մակարդակով սահմանվեն աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի ինդիկատիվ արժեքներ:

Այդ սահմանային թույլատրելի արժեքները սահմանելիս կամ վերանայելիս, 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, հաշվի է առնվում չափման մեթոդների առկայությունը: Անդամ պետություններն աշխատողների և գործատուների կազմակերպություններին տեղյակ են պահում Համայնքի մակարդակով սահմանված՝ աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի ինդիկատիվ արժեքների մասին:

3. Յուրաքանչյուր քիմիական նյութի դեպքում, որի համար Համայնքի մակարդակով սահմանված է աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի ինդիկատիվ արժեք, անդամ պետությունների կողմից սահմանվում է աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի ազգային արժեք՝ հաշվի առնելով Համայնքի մակարդակով սահմանված սահմանային թույլատրելի արժեքը և այն ազգային օրենսդրության ու գործելակերպի համաձայն բնորոշելով:

4. Աշխատավայրում ազդեցության ենթարկվելու կենսաբանական սահմանային թույլատրելի պարտադիր արժեքները կարող են սահմանվել Համայնքի մակարդակով և, ի հավելումն աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի ինդիկատիվ արժեքների սահմանման ընթացքում դիտարկված գործոնների՝ աշխատավայրում աշխատողների առողջության պահպանման նպատակով պետք է արտացոլեն նաև դրանց իրագործելիության պայմանները: Այդօրինակ սահմանային թույլատրելի արժեքները պետք է սահմանվեն Պայմանագրի 118ա հոդվածի համաձայն և պետք է նշվեն սույն Հրահանգի I հավելվածում:

5. Անդամ պետությունների կողմից յուրաքանչյուր այն քիմիական նյութի դեպքում, որի համար սահմանված է աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի արժեք, սահմանվում է Համայնքի սահմանային թույլատրելի արժեքի վրա հիմնված, սակայն այն չգերազանցող համապատասխան՝ աշխատավայրում ազդեցության ենթարկվելու ազգային պարտադիր սահմանային թույլատրելի արժեք:

6. Կենսաբանական պարտադիր սահմանային թույլատրելի արժեքները Համայնքի մակարդակով կարող են սահմանվել՝ հիմնվելով 1-ին պարբերության մեջ նկարագրված գնահատման և չափման մեթոդների առկայության վրա և աշխատավայրում աշխատողների առողջության պահպանման նպատակով պետք է արտացոլեն նաև դրանց իրագործելիության պայմանները: Այդօրինակ սահմանային թույլատրելի արժեքները պետք է սահմանվեն Պայմանագրի 118ա հոդվածում նշված ընթացակարգի համաձայն և

առողջական վիճակի վերահսկողության վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հետ միասին նշվեն սույն Հրահանգի II հավելվածում:

7. Յուրաքանչյուր քիմիական նյութի դեպքում, որի համար սահմանված է կենսաբանական պարտադիր սահմանային թույլատրելի արժեք, անդամ պետությունների կողմից սահմանվում է Համայնքի սահմանային թույլատրելի արժեքի վրա հիմնված, սակայն այն չգերազանցող համապատասխան կենսաբանական ազգային սահմանային թույլատրելի արժեք:

8. Այն դեպքում, երբ անդամ պետությունը քիմիական նյութի համար սահմանում է աշխատավայրում ազդեցության ենթարկվելու ազգային սահմանային թույլատրելի արժեք կամ կենսաբանական ազգային սահմանային թույլատրելի արժեք կամ վերանայում է դրանք, ապա նա դրա, ինչպես նաև համապատասխան գիտական և տեխնիկական տվյալների մասին տեղեկացնում է Հանձնաժողովին և մյուս անդամ պետություններին: Հանձնաժողովը համապատասխան գործողություններ է ձեռնարկում:

9. 15-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունների կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա Հանձնաժողովը գնահատում է աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի ազգային արժեքները սահմանելիս անդամ պետությունների կողմից Համայնքի սահմանային թույլատրելի ինդիկատիվ արժեքները հաշվի առնելու համապատասխան եղանակը:

10. Աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի արժեքների մասով աշխատավայրում՝ օդում առկա կոնցենտրացիաների չափման և գնահատման ստանդարտացված մեթոդները մշակվում են 12(2) հոդվածի համաձայն:

ԲԱԺԻՆ II

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4

Վտանգավոր քիմիական նյութերի հետ կապված ռիսկի որոշումն ու գնահատումը

1. Գործատուն, 89/391/ԵՏՀ հրահանգի 6(3) և 9(1) հոդվածներով սահմանված պարտավորություններն իրականացնելիս, նախ և առաջ որոշում է՝ արդյոք

աշխատավայրում կա որևէ վտանգավոր քիմիական նյութ: Դրանց առկայության դեպքում նա այնուհետև գնահատում է աշխատողների անվտանգության և առողջության հետ կապված ու այդ քիմիական նյութերի առկայությամբ պայմանավորված ցանկացած ռիսկ՝ հաշվի առնելով հետևյալը՝

-դրանց վտանգավոր հատկությունները.

-մատակարարի կողմից ներկայացվելիք անվտանգությանն առնչվող և առողջապահական բնույթի տեղեկատվությունը (օրինակ՝ անվտանգության անձնագիրը՝ 67/548/ԵՏՀ կամ 88/379/ԵՏՀ հրահանգների դրույթների համաձայն).

-դրանց հետ շփման մակարդակը, տեսակը և տևողությունը.

- նման նյութեր ներառող աշխատանքային հանգամանքները՝ ներառյալ այդ նյութերի քանակը.

-աշխատավայրում ազդեցության ենթարկվելու ցանկացած սահմանային թույլատրելի արժեք կամ կենսաբանական սահմանային թույլատրելի արժեք, որը սահմանվել է տվյալ անդամ պետության տարածքում.

-ձեռնարկված կամ ձեռնարկվելիք կանխարգելիչ միջոցների ազդեցությունը.

-առկայության դեպքում՝ առողջական վիճակի արդեն իսկ իրականացված վերահսկողության արդյունքում կատարված եզրահանգումները.

Գործատուն պետք է մատակարարից կամ դյուրամատչելի աղբյուրներից ստանա ռիսկի գնահատման համար անհրաժեշտ հավելյալ տեղեկատվություն: Այդ տեղեկատվությունն անհրաժեշտության դեպքում պետք է օգտագործողների համար պարունակի ենթադրվող ռիսկերի վերաբերյալ՝ քիմիական նյութերի մասին Համայնքի օրենսդրության հիման վրա իրականացված հատուկ գնահատում:

2. 89/391/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածի համաձայն՝ ռիսկերի գնահատումը պետք է գտնվի գործատուի տնօրինության տակ, ով պետք է և որոշի՝ որ միջոցներն են ընտրվել սույն Հրահանգի 5-րդ և 6-րդ հոդվածների համաձայն: Ազգային օրենսդրության և գործելակերպի համաձայն՝ ռիսկերի գնահատումը պետք է համապատասխան կերպով փաստաթղթավորվի և այն կարող է ներառել գործատուի հիմնավորումն այն մասին, որ քիմիական նյութերի հետ կապված ռիսկերի բնույթով ու մակարդակով է պայմանավորված ռիսկերի հետագա մանրամասն գնահատման անհրաժեշտության բացակայությունը:

Ռիսկերի գնահատումը պետք է թարմացվի հատկապես այն դեպքում, երբ տեղի են ունեցել այնպիսի էական փոփոխություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել դրա արդիականությունը կամ երբ այն թարմացնելու անհրաժեշտությունն առաջացել է առողջական վիճակի վերահսկողության արդյունքների հետևանքով:

3. Կազմակերպությունների կամ հաստատությունների ներսում իրականացվող գործողության որոշ տեսակներ, ինչպիսին պահպանությունն է, որի դեպքում կարելի է էական շփման հավանականություն կանխատեսել կամ որն այլ պատճառներով կարող է վնասակար ազդեցություն ունենալ անվտանգության և առողջության վրա, անգամ այն բանից հետո, երբ ձեռնարկվել են տեխնիկական բոլոր միջոցները, ներառվում են ռիսկի գնահատման մեջ:

4. Մի շարք վտանգավոր քիմիական նյութերի հետ շփում ենթադրող գործունեության տեսակների դեպքում ռիսկի գնահատումն իրականացվում է այդ քիմիական նյութերի ներկայացրած ընդհանուր ռիսկի հիման վրա:

5. Վտանգավոր քիմիական նյութերի հետ շփում ենթադրող գործունեության նոր տեսակի դեպքում աշխատանքներն սկսվում են միայն այն բանից հետո, երբ իրականացվել է այդ գործունեության ռիսկի գնահատում և կիրառվել է որևէ սահմանված կանխարգելիչ միջոց:

6. Ռիսկերի որոշման և գնահատման գործնական ուղեցույցները, վերանայման և, անհրաժեշտության դեպքում, դրանցում ճշգրտումներ կատարելու նպատակով, մշակվում են 12(2) հոդվածի համաձայն:

Հոդված 5

Վտանգավոր քիմիական նյութերի հետ կապված ռիսկերի կանխարգելման ընդհանուր սկզբունքները և ռիսկերի գնահատման մասով սույն Հրահանգի կիրառությունը

1. Գործատուն, վտանգավոր քիմիական նյութեր ներառող ցանկացած գործունեության ընթացքում աշխատողների առողջության և անվտանգության ապահովման մասով իր պարտավորությունն իրականացնելիս պետք է ձեռնարկի 89/391/ԵՏՀ հրահանգի 6(1) և (2) հոդվածով սահմանված անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ և դրանցում ներառի սույն Հրահանգով սահմանված միջոցները:

2. Աշխատավայրում աշխատողների առողջությանը և անվտանգությանը վտանգավոր քիմիական նյութերի հետևանքով սպառնացող ռիսկերը պետք է վերացվեն կամ հասցվեն նվազագույնի՝

- աշխատավայրում աշխատանքային համակարգերի նախագծման և կազմակերպման միջոցով.

- քիմիական նյութեր ներառող և այդ նյութերի պահպանման գործընթացների հետ առնչվող աշխատանքների համար համապատասխան այնպիսի սարքավորումների տրամադրման միջոցով, որոնք ապահովում են աշխատավայրում աշխատողների առողջության և անվտանգության պահպանումը.

- քիմիական նյութերի հետ շփվող կամ շփվելու հավանականություն ունեցող աշխատողների թիվը նվազագույնի հասցնելու միջոցով.

- քիմիական նյութերի հետ շփման տևողությունը և ինտենսիվությունը նվազագույնի հասցնելու միջոցով.

- հիգիենայի պահպանման անհրաժեշտ միջոցների կիրառմամբ.

- աշխատավայրում առկա քիմիական նյութերի քանակը համապատասխան աշխատանքի տեսակի համար պահանջվող մինիմում մակարդակի հասցնելու միջոցով.

- վտանգավոր քիմիական նյութեր կամ նմանօրինակ քիմիական նյութերի առկայությամբ թափոններ պարունակող աշխատավայրում համապատասխան աշխատանքային գործընթացների, այդ թվում՝ անվտանգ բեռնավորման–բեռնաթափման, պահեստավորման և փոխադրման միջոցառումների իրականացման միջոցով:

12(2) հոդվածի համաձայն մշակվում են ռիսկերի վերահսկմանն ուղղված կանխարգելիչ միջոցների վերաբերյալ գործնական ուղեցույցներ:

3. Այն դեպքում, երբ 4(1) հոդվածում նշված գնահատման արդյունքների հետևանքով պարզվել է, որ ռիսկի է ենթարկված աշխատողների անվտանգությունը և առողջությունը, կիրառվում են 6-րդ, 7-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված հատուկ պաշտպանության, կանխարգելման և դիտանցման միջոցներ:

4. Այն դեպքում, երբ 4(1) հոդվածում նշված ռիսկի գնահատման արդյունքներով ցույց են տրվում, որ աշխատավայրում առկա վտանգավոր քիմիական նյութերի որոշակի քանակությունների պատճառով թեթև ռիսկի է ենթարկված աշխատողների

անվտանգությունն ու առողջությունը, և որ սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն ձեռնարկված միջոցները բավարար են՝ այդ ռիսկը նվազեցնելու համար, ապա 6-րդ, 7-րդ, և 10-րդ հոդվածների դրույթները չեն կիրառվում:

Հոդված 6

Պաշտպանության և կանխարգելման հատուկ միջոցները

1. Գործատուն ապահովում է, որպեսզի վերացվի կամ նվազագույնի հասցվի աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության համար ենթադրվող ռիսկը:

2. 1-ին պարբերությունը կիրառելիս, հանգամանքներից ելնելով, նախապատվությունը տրվում է փոխարինմանը, որի ժամանակ գործատուն, խուսափելով վտանգավոր քիմիական նյութ օգտագործելուց, այն փոխարինում է այնպիսի քիմիական նյութով կամ պրոցեսով, որն իր օգտագործման պայմանների շնորհիվ վտանգավոր չէ կամ քիչ վտանգավոր է աշխատողների անվտանգության և առողջության համար:

Այն դեպքում, երբ գործողության բնույթը թույլ չի տալիս, որ փոխարինման արդյունքում ռիսկը վերացվի, ապա գործատուն, հաշվի առնելով 4-րդ հոդվածում նշված գործունեության և ռիսկի գնահատումը, պաշտպանիչ և կանխարգելիչ միջոցների կիրառման միջոցով ապահովում է, որպեսզի ռիսկը նվազագույնի հասցվի՝ 4-րդ հոդվածի համաձայն իրականացված ռիսկի գնահատմանը համապատասխան: Դրանք, ըստ հերթականության, ներառում են՝

ա) աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության համար ռիսկ ենթադրող վտանգավոր քիմիական նյութերի արտազատումից խուսափելու կամ այն նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ աշխատանքային գործընթացի, ինժեներական հսկողության միջոցների ու համապատասխան սարքավորման և նյութերի օգտագործման եղանակների մշակում.

բ) ռիսկի աղբյուր հանդիսացող վայրում պաշտպանության համալիր այնպիսի միջոցների կիրառում, ինչպիսիք պատշաճ օդափոխությունն ու կազմակերպչական համապատասխան միջոցներն են.

գ) այն դեպքում, երբ շփումը չի կարող կանխվել այլ միջոցներով, պաշտպանության անհատական միջոցների, այդ թվում՝ անձնական պաշտպանիչ սարքավորման կիրառում:

12(2) հոդվածի համաձայն մշակվում են ռիսկերի վերահսկմանն ուղղված պաշտպանության և կանխարգելման միջոցների վերաբերյալ գործնական ուղեցույցներ:

3. Սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված միջոցներն ուղեկցվում են 10-րդ հոդվածի համաձայն իրականացվող առողջական վիճակի վերահսկողությամբ, եթե այն համապատասխանում է ռիսկի բնույթին:

4. Քանի դեռ գործատուն հստակորեն գնահատման այլ միջոցներով ցույց չի տվել, որ 2-րդ պարբերության համաձայն ձեռք է բերվել կանխարգելման և պաշտպանության պատշաճ մակարդակ, ապա պայմանների ցանկացած այնպիսի փոփոխության դեպքում, որը կարող է ազդել քիմիական նյութերի հետ աշխատողների շփման վրա, գործատուն աշխատավայրում աշխատողների առողջությունը ռիսկի ենթարկելու հավանականություն ունեցող քիմիական նյութերի, մասնավորապես, աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի արժեքների մասով, անհրաժեշտ չափումներ է պարբերաբար իրականացնում:

5. Գործատուն, 4-րդ հոդվածով սահմանված կամ դրա հետևանքով առաջացած պարտավորություններն իրականացնելիս, հաշվի է առնում սույն հոդվածի 4-րդ պարբերության մեջ նշված գործընթացների արդյունքները:

Ցանկացած դեպքում, երբ գերազանցվել են աշխատավայրում ազդեցության ենթարկվելու՝ անդամ պետության տարածքում արդյունավետորեն սահմանված սահմանային թույլատրելի արժեքները, գործատուն, հաշվի առնելով այդ սահմանաչափը, պետք է կանխարգելիչ և պաշտպանիչ միջոցների իրականացման միջոցով շտապ քայլեր ձեռնարկի՝ իրավիճակը շտկելու համար:

6. Գործատուն, հիմնվելով 4-րդ և 5-րդ հոդվածներում նշված ռիսկերի կանխարգելման ընդհանուր սկզբունքների և ընդհանուր գնահատման վրա, ձեռնարկում է աշխատանքի բնույթին համապատասխան տեխնիկական և (կամ) կազմակերպչական միջոցներ՝ ներառյալ պահեստավորումը, բեռնավորում–բեռնաթափումը և անհամատեղելի քիմիական նյութերի առանձնացումը՝ դրանով ապահովելով աշխատողների պաշտպանությունը քիմիական նյութերի ֆիզիկաքիմիական հատկությունների հետևանքով առաջացող վտանգներից: Նա, ըստ հերթականության, ձեռնարկում է միջոցներ, ուղղված՝

ա) աշխատավայրում դյուրավառ նյութերի վտանգավոր կոնցենտրացիաների կամ քիմիապես անկայուն նյութերի առկայությունը թույլ չտալուն, երբ դրանց կիրառությունը նախատեսված չէ աշխատանքի բնույթով.

բ) հրդեհների և պայթյունների պատճառ դառնալու հավանականություն ունեցող բռնկման աղբյուրների գոյության կամ անբարենպաստ այնպիսի պայմանների բացառմանը, որոնց հետևանքով քիմիապես անկայուն նյութերը կամ նյութերի խառնուրդները կարող են վնասակար ֆիզիկական ազդեցության պատճառ դառնալ.

գ) դյուրավառ նյութերի բռնկման պատճառով տեղի ունեցած հրդեհի կամ պայթյունի դեպքում աշխատողների առողջության և անվտանգության վրա վնասակար ազդեցությունների կամ քիմիապես անկայուն նյութերի, կամ նյութերի խառնուրդների հետևանքով առաջացած վնասակար ֆիզիկական ազդեցությունների մեղմացմանը:

Գործատուի կողմից աշխատողների պաշտպանության համար նախատեսված աշխատանքային սարքավորման և պաշտպանիչ համակարգերի ապահովումը պետք է համապատասխանի Համայնքի՝ առողջապահությանն ու անվտանգության ապահովմանն ուղղված նախագծման, արտադրության և մատակարարման վերաբերյալ համապատասխան դրույթներին: Գործատուի կողմից ձեռնարկված տեխնիկական և (կամ) կազմակերպչական միջոցների առնչությամբ պետք է հաշվի առնվեն և դրանք պետք է համապատասխանեն «Պոտենցիալ պայթյունավտանգ միջավայրում օգտագործման համար նախատեսված սարքավորումների և պաշտպանիչ համակարգերի վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի մարտի 23-ի 94/9/ԵՀ հրահանգի (19) I հավելվածում նշված սարքավորումների խմբերի դասակարգմանը:

Գործատուն միջոցներ է ձեռնարկում գործարանի, սարքավորման և մեխանիզմների նկատմամբ բավարար հսկողություն ապահովելու համար կամ տրամադրում է պայթյունը զսպող սարքավորում, կամ ձեռնարկում է պայթյունի ճնշման թուլացմանն ուղղված միջոցառումներ:

Հոդված 7

Վթարներին, պատահարներին և արտակարգ իրավիճակներին դիմագրավելու միջոցառումներ

1. Գործատուն, չխախտելով 89/391/ԵՏՀ հրահանգի 8-րդ հոդվածով սահմանված պարտավորությունները, վթարի, պատահարի կամ աշխատավայրում վտանգավոր քիմիական նյութերի առկայությամբ պայմանավորված արտակարգ իրավիճակի դեպքում աշխատողների անվտանգությունն ու առողջությունը պաշտպանելու և անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու նպատակով սահմանում է այնպիսի ընթացակարգեր (գործողության ծրագրեր), որոնք ցանկացած նմանատիպ դեպքում կարող են գործողության մեջ դրվել: Այդ միջոցառումները ներառում են անվտանգության ցանկացած համապատասխան վարժանք, որը պետք է անցկացվի կանոնավոր ընդմիջումներով, ինչպես նաև անհրաժեշտ առաջին օգնության ծառայություններ:

2. 1-ին պարբերության մեջ նշված միջադեպի դեպքում գործատուն անմիջապես քայլեր է ձեռնարկում՝ դրա հետևանքները մեղմացնելու և համապատասխան աշխատողներին դրա մասին տեղեկացնելու համար:

Իրավիճակը բնականոն ընթացքի վերադարձնելու համար՝

- գործատուն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ իրավիճակը հնարավորինս շուտ շտկելու համար.

- ազդակիր (ազդեցության ենթարկված) տարածքում աշխատելու թույլտվություն է տրվում միայն այն աշխատողներին, ովքեր էական դեր ունեն վերանորոգման այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացման գործում:

3. Ազդակիր տարածքում աշխատելու թույլտվություն ստացած աշխատողներն ապահովվում են համապատասխան պաշտպանիչ հանդերձանքով, անձնական պաշտպանիչ սարքավորմամբ, մասնագիտացված անվտանգության սարքավորմամբ և այնպիսի սարքերով, որոնք նրանց կողմից օգտագործվում են այնքան ժամանակ, քանի դեռ պահպանվում է իրավիճակը. նշվածը մշտական բնույթ չի կրում:

Չպաշտպանված անձանց չի թույլատրվում մնալ ազդակիր տարածքում:

4. Գործատուն, չխախտելով 89/391/ԵՏՀ հրահանգի 8-րդ հոդվածի դրույթները, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ անվտանգությանը և առողջությանը սպառնացող աճող ռիսկի մասին ազդանշան տալու համար պահանջվող զգուշացման և հեռահաղորդակցման այլ

համակարգերի ապահովման նպատակով, որն անմիջապես, անհրաժեշտության դեպքում համապատասխանաբար արձագանքելու, ինչպես նաև վերականգնողական, աջակցության, տարհանման և փրկարարական գործողություններ իրականացնելու հնարավորություն կընձեռի:

5. Գործատուն ապահովում է վտանգավոր քիմիական նյութերի առկայությամբ արտակարգ իրավիճակներում անցկացվող միջոցառումների հասանելիությունը: Համապատասխան ներքին ու արտաքին վթարների և արտակարգ իրավիճակների ծառայությունների համար պետք է մատչելի լինի ներքոնշյալ տեղեկատվությունը: Այն պետք է ներառի հետևյալը՝

–համապատասխան աշխատանքի վտանգների մասին նախապես ծանուցում, վտանգի նույնականացման միջոցառումներ, նախազգուշական միջոցներ և գործելակերպեր, որոնք արտակարգ իրավիճակների ծառայություններին հնարավորություն կտան մշակելու իրենց սեփական պատասխան գործելակերպն ու նախազգուշական միջոցները և

-վթարի կամ արտակարգ իրավիճակի ժամանակ առաջացող կամ առաջացման հավանականություն ունեցող հատուկ վտանգների, այդ թվում՝ սույն հոդվածի համաձայն մշակվող գործելակերպերի վերաբերյալ ցանկացած հասանելի տեղեկատվություն:

Հոդված 8

Աշխատողների տեղեկացվածությունը և վերապատրաստումը

1. Գործատուն, չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 10-րդ և 12-րդ հոդվածներին, ապահովում է, որպեսզի աշխատողներին և (կամ) նրանց ներկայացուցիչներին տրամադրվեն՝

–սույն Հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն ձեռք բերված տվյալներ և նրանք հետագայում տեղեկացվեն ցանկացած էական փոփոխության վերաբերյալ, որը կարող է հանգեցնել այդ տվյալների փոփոխմանը.

-աշխատավայրում հանդիպող վտանգավոր քիմիական նյութերի վերաբերյալ տեղեկատվություն՝ այդ նյութերի առանձնահատկությունների, առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկերի, աշխատավայրում ազդեցության ենթարկվելու սահմանային թույլատրելի համապատասխան արժեքների և այլ օրենսդրական դրույթների վերաբերյալ.

-վերապատրաստման և անհրաժեշտ նախազգուշական միջոցների, ինչպես նաև աշխատավայրում այլ աշխատողներին և իրենք իրենց պաշտպանելու համար ձեռնարկվող գործողությունների մասին տեղեկատվություն.

- 88/379/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածի և 92/32/ԵՏՀ հրահանգի (20) 27-րդ հոդվածի համաձայն մատակարարի կողմից տրամադրված ցանկացած անվտանգության անձնագրի ծանոթանալու հնարավորություն.

և որ այդ տեղեկատվությունը՝

- տրամադրվի սույն Հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն իրականացված ռիսկի գնահատման արդյունքների հետ համաձայնեցված եղանակով: Այն կարող է տարբեր լինել՝ սկսած բանավոր հաղորդակցությունից մինչև անհատական ցուցումներ և գրավոր տեղեկատվությամբ ապահովվող վերապատրաստում՝ կախված տվյալ հոդվածով պահանջվող գնահատման արդյունքում բացահայտված ռիսկի աստիճանից և բնույթից.

– թարմացվի և դրանում հաշվի առնվեն փոփոխվող հանգամանքները:

2. Այն դեպքում, երբ աշխատավայրում օգտագործվող և վտանգավոր քիմիական նյութերի համար նախատեսված տարաները և գլանները մակնշված չեն քիմիական նյութերի պիտակավորման ու աշխատավայրում անվտանգության նշանների վերաբերյալ Համայնքի համապատասխան օրենսդրության համաձայն, ապա գործատուն, չհակասելով վերոնշյալ օրենսդրությամբ նախատեսված շեղումներին, ապահովում է, որ տարաների և գլանների պարունակությունը, ինչպես նաև այդ պարունակության բնույթն ու դրա հետ կապված ցանկացած վտանգ հնարավոր լինի հստակ որոշել:

3. Անդամ պետությունները կարող են ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի գործատուները կարողանան, ցանկալի է արտադրողից կամ մատակարարից, պահանջի դեպքում սույն Հրահանգի 4(1) հոդվածի կիրառման նպատակով անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ վտանգավոր քիմիական նյութերի վերաբերյալ, քանի որ 67/548/ԵՏՀ և 88/379/ԵՏՀ հրահանգները չեն ներառում տեղեկատվություն տրամադրելու որևէ պարտավորություն:

ԲԱԺԻՆ III

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 9

Արգելքները

1. Թույլ չտալու համար, որպեսզի աշխատողներն առնչվեն որոշ քիմիական նյութերի և (կամ) գործունեության որոշ տեսակների հետևանքով առաջացող ռիսկերի հետ, արգելվում են III հավելվածում նշված գործունեության տեսակները, ինչպես նաև նույն տեղում նշված քիմիական նյութերի արտադրությունը, մշակումը կամ կիրառությունը աշխատավայրում:

2. Անդամ պետությունները կարող են 1-ին պարբերության պահանջներից շեղումներ կատարելու թույլտվություն տալ հետևյալ դեպքերում՝

– զուտ գիտական հետազոտություն և փորձաստուգում, ինչպես նաև վերլուծություն կատարելու նպատակով.

- կողմնակի արտադրանքների և թափոնների տեսքով գոյություն ունեցող քիմիական նյութերի ոչնչացման համար նախատեսված գործունեության նպատակով.

- 1-ին պարբերության մեջ նշված քիմիական նյութերի արտադրության ու դրանք որպես միջանկյալ նյութեր օգտագործելու և նմանատիպ նպատակներով:

1-ին պարբերության մեջ նշված քիմիական նյութերի հետ աշխատողների շփումը պետք է թույլ չտրվի, հատկապես ապահովելով, որպեսզի այդօրինակ քիմիական նյութերի արտադրությունը և դրանք որպես միջանկյալ նյութեր օգտագործելու ամենավաղ հավանական դեպքերը տեղի ունենան մեկ փակ համակարգում, որից վերոնշյալ քիմիական նյութերը հնարավոր կլինի հեռացնել համակարգի շահագործման կամ գործընթացի դիտանցման համար անհրաժեշտ քանակով:

Անդամ պետությունները կարող են նախատեսել առանձին թույլտվությունների համակարգեր:

3. 2-րդ պարբերության համաձայն շեղումներ կատարելու թույլտվության դեպքում իրավասու մարմինը գործատուից պահանջում է, որպեսզի նա ներկայացնի հետևյալ տեղեկատվությունը՝

– շեղումներ կատարելու պահանջ ներկայացնելու պատճառներ.

- քիմիական նյութերի տարեկան օգտագործվելիք քանակություն.

- ներառված գործունեության տեսակներ և (կամ) հակազդեցության միջոցներ կամ գործընթացներ.

– ներգրավված լինելու հավանականություն ունեցող աշխատողների թիվ.

- համապատասխան աշխատողների անվտանգությունը և առողջությունը պաշտպանելու համար նախատեսված նախազգուշական միջոցներ.

- քիմիական նյութերի հետ աշխատողների շփումը թույլ չտալու համար ձեռնարկված տեխնիկական և կազմակերպչական միջոցներ:

4. Խորհուրդը, Պայմանագրի 118ա հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, կարող է փոփոխել սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված արգելքների ցանկը՝ այլ քիմիական նյութեր և գործունեության տեսակներ ներառելու նպատակով:

Հոդված 10

Առողջական վիճակի վերահսկողությունը

1. Չխախտելով 89/391/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածի դրույթները՝ անդամ պետությունները միջոցներ են առաջ քաշում այն աշխատողների առողջական վիճակի պատշաճ վերահսկողությունն իրականացնելու համար, որոնց առողջությունը սույն Հրահանգի 4-րդ հոդվածում նշված գնահատման արդյունքում պարզվել է, որ ռիսկի է ենթարկված: Այդ միջոցները՝ ներառյալ առողջական վիճակի և վտանգի ենթարկված լինելու վերաբերյալ քարտերի համար սահմանված պահանջները և դրանց առկայությունը, պետք է նախատեսվի ազգային օրենսդրության և (կամ) գործելակերպի համաձայն:

Առողջական վիճակի վերահսկողությունը, որի արդյունքները հաշվի են առնվում հատուկ աշխատավայրերում կանխարգելիչ միջոցների կիրառման ժամանակ, անհրաժեշտ է, երբ՝

- վտանգավոր քիմիական նյութի հետ աշխատողի շփումն այնպիսին է, որ ախտորոշվող հիվանդությունը կամ առողջության բացասական ազդեցության ենթարկվելը կարող են վերագրվել այդ շփմանը և

– հավանականություն կա, որ հիվանդությունը կամ ազդեցությունը կարող են առաջանալ աշխատողի աշխատանքային որոշակի պայմաններում և

- հետազոտության եղանակը թույլ ռիսկ է ենթադրում աշխատողների համար:

Ավելին, պետք է գոյություն ունենան հիվանդության կամ ազդեցության ախտանիշները հայտնաբերելու գործուն եղանակներ:

Այն դեպքում, երբ II հավելվածում նշվածի համաձայն սահմանվել է կենսաբանական պարտադիր սահմանային թույլատրելի արժեք, ապա այդ հավելվածում նշված ընթացակարգերի համաձայն, առողջական վիճակի վերահսկողությունը տվյալ վտանգավոր քիմիական նյութերի հետ աշխատանքի դեպքում պետք է պարտադիր պահանջ լինի: Մինչ նշված վտանգավոր քիմիական նյութերի հետ շփման հետևանքով ռիսկ ենթադրող հանձնարարություն տալը՝ աշխատողներին պետք է տեղեկացնել այդ պահանջի մասին:

2. Անդամ պետությունները միջոցներ են նախատեսում՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուր աշխատողի համար, ով 1–ին պարբերության պահանջների համաձայն, ենթարկվում է բժշկական վերահսկողության, պատրաստվեն առողջական վիճակի և վտանգի ենթարկված լինելու վերաբերյալ անհատական քարտեր, և որպեսզի դրանք թարմացվեն:

3. Առողջական վիճակի և վտանգի ենթարկված լինելու վերաբերյալ քարտերը պետք է պարունակեն առողջական վիճակի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների համառոտագիր և դիտանցման ցանկացած տվյալ, որը ներկայացնում է անհատի վտանգված լինելը: Առողջական վիճակի վերահսկողության գործընթացի մի մասը կարող են կազմել կենսաբանական դիտանցումը և դրան առնչվող պահանջները:

Առողջական վիճակի և վտանգի ենթարկված լինելու վերաբերյալ քարտերը պետք է պահվեն համապատասխան ձևով այնպես, որ հնարավոր է լինի դրանցից օգտվել մեկ այլ ժամանակ՝ հաշվի առնելով գաղտնիությունը:

Համապատասխան քարտերի օրինակները տրամադրվում են իրավասու մարմնին՝ նրա պահանջով: Պահանջ ներկայացնելու դեպքում առանձին աշխատողը կարող է օգտվել անձամբ իրեն վերաբերող առողջական վիճակի և վտանգի ենթարկված լինելու վերաբերյալ քարտերից:

Այն դեպքում, երբ ձեռնարկությունը դադարում է առևտրային գործունեություն ծավալել, ապա առողջական վիճակի և վտանգի ենթարկված լինելու վերաբերյալ քարտերը տրամադրվում են իրավասու մարմնին:

4. Երբ առողջական վիճակի վերահսկողության արդյունքում պարզվում է, որ՝

- աշխատողն ունի ախտորոշվող հիվանդություն կամ նրա առողջությունը բացասական ազդեցության է ենթարկվել և դրանք բժշկի կամ մասնագիտական հիվանդություններով զբաղվող բժշկի կարծիքով տեղի են ունեցել աշխատավայրում վտանգավոր քիմիական նյութերի հետ շփման հետևանքով կամ

- գերազանցվել է կենսաբանական պարտադիր սահմանային թույլատրելի արժեքը.

աշխատողը, բժշկի կամ այլ՝ համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից, տեղեկացվում է անձամբ իրեն վերաբերող արդյունքների մասին, ինչպես նաև նրան տրամադրվում է տեղեկատվություն և խորհրդատվություն առողջական վիճակի ցանկացած վերահսկողության վերաբերյալ, որը նա պետք է անցի վտանգի ենթարկվելուց հետո և

գործատուն պետք է՝

- վերանայի 4(1) հոդվածի համաձայն իրականացված ռիսկերի գնահատումը.
- վերանայի 5–րդ և 6-րդ հոդվածների համաձայն նախատեսված և ռիսկերի վերացմանը կամ նվազեցմանն ուղղված միջոցները՝ .
- 6–րդ հոդվածով նախատեսված ռիսկերի վերացման կամ նվազեցմանն ուղղված միջոցների կիրառման ժամանակ հաշվի առնի մասնագիտական հիվանդություններով զբաղվող բժշկի կամ այլ՝ համապատասխան որակավորում ունեցող անձի կամ իրավասու մարմնի կողմից ներկայացված առաջարկությունները՝ ներառյալ տվյալ աշխատողին մեկ այլ՝ ռիսկ չենթադրող աշխատանքի փոխադրելու հնարավորությունը և

-կազմակերպի բժշկական շարունակական վերահսկողություն և ապահովի նմանատիպ վտանգի ենթարկված ցանկացած աշխատողի առողջական վիճակի ուսումնասիրություն: Նման դեպքերում, իրավասու բժիշկը կամ մասնագիտական հիվանդություններով զբաղվող բժիշկը, կամ իրավասու մարմինը կարող է վտանգի ենթարկված անձանց առաջարկել բժշկական զննություն անցնել:

Հոդված 11

Աշխատողների հետ խորհրդակցության անցկացումը և դրանում նրանց մասնակցությունը

Սույն Հրահանգով և դրա հավելվածներով կարգավորվող խնդիրների վերաբերյալ աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցության անցկացումը կամ դրանում նրանց մասնակցությունը պետք է տեղի ունենա 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 12

Հավելվածների համապատասխանեցումը, տեխնիկական ուղեցույցների մշակումը և հաստատումը

1. Հավելվածում խիստ տեխնիկական բնույթի փոփոխությունները կատարվում են հետևյալի հիման վրա՝

–տեխնիկական ներդաշնակեցման և քիմիական նյութերին առնչվող ստանդարտացման ոլորտում հրահանգների ընդունում և (կամ)

– տեխնիկական առաջընթաց, միջազգային ստանդարտներում կամ տեխնիկական պայմաններում կատարված փոփոխություններ և քիմիական նյութերին վերաբերող նոր հայտնագործություններ.

հաստատվում են 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

2. Հանձնաժողովը պետք է կազմի ոչ պարտադիր բնույթի գործնական ուղեցույցներ: Այդ ուղեցույցների մեջ պետք է 1-ին բաժնի, II հավելվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներում նշված թեմաներին անդրադարձ կատարվի:

74/325/ԵՏՀ որոշման համաձայն՝ Հանձնաժողովը նախ պետք է խորհրդակցի Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ:

Սույն Հրահանգի իրականացման համատեքստում անդամ պետությունները աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության համար նախատեսված իրենց ազգային

քաղաքականության մշակման ժամանակ պետք է հնարավորինս հաշվի առնեն այդ ուղեցույցները:

Հոդված 13

Ավելի վաղ հրահանգներն ուժը կորցրած ճանաչելը և դրանցում կատարվող փոփոխությունները

1. 80/1107/ԵՏՀ, 82/605/ԵՏՀ և 88/364/ԵՏՀ հրահանգները պետք է ուժը կորցրած ճանաչվեն 14(1) հոդվածում նշված օրը:

2. «Աշխատավայրում ասբեստի հետ շփման հետևանքով առաջացող ռիսկերից աշխատողների պաշտպանության մասին» Խորհրդի 1983 թվականի սեպտեմբերի 19-ի 83/477/ԵՏՀ հրահանգում (21) (երկրորդ առանձին հրահանգ՝ 80/1107/ԵՏՀ հրահանգի 8-րդ հոդվածի իմաստով) պետք է կատարվեն հետևյալ փոփոխությունները՝

ա) 1(1) հոդվածի առաջին նախադասության մեջ պետք է ջնջվեն հետևյալ բառերը՝

«որը երկրորդ առանձին հրահանգն է՝ 80/1107/ԵՏՀ հրահանգի 8-րդ հոդվածի իմաստով».

բ) 9(2) հոդվածը պետք է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

'2. Սույն Հրահանգի հավելվածները տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու համար անհրաժեշտ փոփոխությունները պետք է հաստատվեն «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցառումներ նախատեսելու մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի (*) 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

(*) ՊՏ L 183, 29.06.1989 թ., էջ 1.

գ) 15(1) հոդվածի երկրորդ ենթապարբերության «80/1107/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածով նշված ընթացակարգին համապատասխան» բառերը պետք է փոխարինվեն հետևյալով՝

«89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան»:

3. «Աշխատավայրում աղմուկի ազդեցությանը վերաբերող ռիսկերից աշխատողների պաշտպանության մասին» Խորհրդի 1986 թվականի մայիսի 12-ի 86/188/ԵՏՀ հրահանգում (22) պետք է կատարվեն հետևյալ փոփոխությունները՝

ա) 1(1) հոդվածում պետք է ջնջվեն հետևյալ բառերը՝

«որը երրորդ առանձին հրահանգն է՝ 80/1107/ԵՏՀ հրահանգի իմաստով».

բ)12(2) հոդվածի երկրորդ ենթապարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

I և II հավելվածները տեխնիկական առաջընթացին պետք է հարմարեցվեն «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցառումներ նախատեսելու մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի (*) 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

(*) ՊՏ L 183, 29.06.1989 թ., էջ 1:

4. 83/477/ԵՏՀ և 86/188/ԵՏՀ հրահանգների մեջ 80/1107/ԵՏՀ հրահանգին կատարված ցանկացած այլ հղում նշված հրահանգն ուժը կորցրած ճանաչելու օրվանից հնացած է համարվում:

5. 91/322/ԵՏՀ և 96/94/ԵՀ հրահանգներն ուժի մեջ են մնում:

ԲԱԺԻՆ IV

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 14

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը ոչ ուշ, քան մինչև 2001 թվականի մայիսի 5-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի տեքստերը, որոնք նրանք արդեն ընդունել կամ պետք է ընդունեն սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 15

Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ Հանձնաժողով հաշվետվություն են ներկայացնում սույն Հրահանգի գործնական իրականացման մասին՝ նշելով գործատուների և աշխատողների տեսակետները:

Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին, Խորհրդին ու Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին տեղեկացնում է այդ մասին:

Հոդված 16

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում իր հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:

Հոդված 17

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում, 1998 թվականի ապրիլի 7–ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Դ. Բլանքեթ

1) ՊՏ C 165, 16. 06. 1993թ., էջ 4:

2) ՊՏ C 34, 02. 02. 1994թ., էջ 42:

3) Եվրոպական պառլամենտի 1994 թվականի ապրիլի 20–ի եզրակացություն (ՊՏ C 128, 09.05.1994թ., էջ 167), Խորհրդի 1997 թվականի հոկտեմբերի 7-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 375, 10.12.1997թ., էջ 2) և Եվրոպական պառլամենտի 1998 թվականի փետրվարի 17-ի որոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում):

4) ՊՏ L 327, 03. 12. 1980թ., էջ 8: Վերջին անգամ 88/642/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 356, 24. 12. 1988թ., էջ 74):

5) ՊՏ L 247, 23. 08. 1982թ., էջ 12:

6) ՊՏ L 179, 09. 07. 1988թ., էջ 44:

7) ՊՏ L 183, 29.06.1989 թ., էջ 1:

8) ՊՏ L 196, 16.08.1967թ., էջ 1: Վերջին անգամ 96/56/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 236, 18.09.1996թ., էջ 35):

9) ՊՏ L 187, 16.07.1988թ., էջ 14:Հանձնաժողովի 96/65/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 265, 18.10.1996թ., էջ 15):

10) ՊՏ L 275, 05.10.1990թ., էջ 35:

11) ՊՏ L 245, 26. 08. 1992թ., էջ 23:

12) ՊՏ L 177, 05.07.1991թ., էջ 22:

13) ՊՏ L 338, 28. 12. 1996թ., էջ 86:

14) ՊՏ L 185, 09. 07. 1974թ., էջ 15: 1994 թվականի «Անդամակցության մասին ակտ»–ով վերջին անգամ փոփոխված որոշում:

15) ՊՏ L 196, 26. 07. 1990թ., էջ 1:

16) «Ավտոճանապարհով վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» Խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 21-ի 94/55/ԵՀ հրահանգ (ՊՏ L 319, 12. 12. 1994թ., էջ. 7): Հանձնաժողովի 96/86/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 335, 24.12.1996թ., էջ 43):

17) «Երկաթուղով վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» Խորհրդի 1996 թվականի հուլիսի 23-ի 96/49/ԵՀ հրահանգ (ՊՏ L 235, 17. 09. 1996թ., էջ. 25): Հանձնաժողովի 96/87/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 335, 24.12.1996թ., էջ 45):

18) «Վտանգավոր կամ աղտոտող ապրանքներ տեղափոխող՝ Համայնքում տեղակայված կամ Համայնքից հեռացող նավերի նկատմամբ նվազագույն պահանջների մասին» Խորհրդի 1993 թվականի սեպտեմբերի 13-ի 93/75/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 247, 05. 10. 1993թ., էջ. 19): Հանձնաժողովի 97/34/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 158, 17.06.1997թ., էջ 40):

19) ՊՏ L 100, 19. 04. 1994թ., էջ 1:

20) ՊՏ L 154, 05. 06. 1992թ., էջ 1:

21) ՊՏ L 263, 24.09.1983թ., էջ 25: Վերջին անգամ 91/382/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 206, 29. 07. 1991թ., էջ 16):

22) ՊՏ L 137, 24. 05. 1986թ., էջ 28:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ

>ԱՂՅՈՒՍԱԿ>

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Կապարը և դրա իոնային միացությունները

1.1. Կենսաբանական դիտանցումը պետք է ներառի արյան մեջ կապարի մակարդակի չափում (PbB)՝ աբսորբցիոն սպեկտրաչափման եղանակով կամ համարժեք արդյունքներ ունեցող մեթոդով: Կենսաբանական պարտադիր սահմանային թույլատրելի արժեքը՝

70 մկգ Pb/100 մլ արյան մեջ

1.2 Բժշկական վերահսկողություն է իրականացվում, երբ՝

-օդում կապարի խտության արժեքը մեծ է 0,075 մգ/մ3 արժեքից, որը հաշվարկված է շաբաթական 40 ժամից ավելի ժամանակահատվածի նկատմամբ կամ

-առանձին աշխատողների արյան մեջ կապարի մակարդակի չափման արդյունքում ստացվել է 40 մկգ Pb/100 մլ արյան մեջ արժեք:

1.3 Կենսաբանական դիտանցման և բժշկական վերահսկողության համար նախատեսված գործնական ուղեցույցները պետք է մշակվեն 12(2) հոդվածի համաձայն: Դրանք պետք է ներառեն կենսաբանական ցուցիչների վերաբերյալ առաջարկություններ (օրինակ՝ ALAU, ZPP, ALAD) և կենսաբանական դիտանցման ռազմավարություններ:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

Ներքոնշյալ քիմիական նյութերի արտադրությունը, մշակումը կամ օգտագործումը աշխատավայրում, ինչպես նաև քիմիական նյութեր ներառող գործունեության տեսակներն արգելված են: Արգելքը չի կիրառվում այն դեպքում, երբ այդ քիմիական նյութն առկա է մեկ այլ քիմիական նյութի մեջ կամ երբ այն թափոնի բաղկացուցիչ մաս է կազմում՝ պայմանով, որ դրանց առանձին կոնցենտրացիաները ցածր են սահմանված սահմանաչափերից: